

«Միջազգային էներգետիկ կորպորացիա»

ՓԲԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ»

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 7-ի №431Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2012 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2013 թվականի ապրիլի 11-ի № 2/9-013 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

### 1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2012 թվականի ներդրումային ծրագիրը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2012 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող ՀԷԿ-երի վերականգնման և վերազինման, անվտանգության բարձրացման, էլեկտրակայանքների փոխարինման, ինչպես նաև՝ շենքերի և շինությունների կառուցման և վերականգնման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մասնագիտական գործիքների, համակարգչային տեխնիկայի և տնտեսական գույքի ձեռքբերման ուղղությամբ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2012 թվականի ներդրումային ծրագրով նախատեսված էր իրականացնել 2 639,3<sup>1</sup> մլն դրամի ներդրումներ: Նշված ծավալի մոտ 80%-ը նախատեսվում էր ուղղել ՀԷԿ-երում էլեկտրատեղակայանքների (անջատիչներ, բաժանիչներ, հոսանքի և լարման տրանսֆորմատորներ և այլն) փոխարինմանը: 2012 թվականի ներդրումային ծրագրի հիմնական ուղղությունները հետևյալն են.


- «Սևան» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների իրականացում՝ 438,3 մլն դրամ,
- «Հրազդան» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների իրականացում՝ 763,8 մլն դրամ,
- «Արգել» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների իրականացում՝ 469,7 մլն դրամ,
- «Արգնի» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների իրականացում՝ 164,7 մլն դրամ,

<sup>1</sup> Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

- «Քանաքեռ» ՀԷԿ-ի վերազինման աշխատանքների իրականացում՝ 586,0 մլն դրամ,
- այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 216,6 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2012 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

**ԳՐԱՖԻԿ 1**



## 2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2012 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2012 թվականի ընթացքում կատարել է 3 154,2 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 2 970,2 մլն դրամի հիմնական միջոցներ և իրականացվել են 8,3 մլն դրամի ընթացիկ ծախսեր: Մնացած 175,7 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

**Աղյուսակ 1**

| N | Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը | Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը |       | Ընդամենը կատարված ներդրումներ |       | Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը |
|---|--|--|-------|-------------------------------|-------|--|
|   |  | մլն դրամ   | %     | մլն դրամ                      | %     | %                                      |
| 1 | 2  | 3  | 4     | 5                             | 6     | 7                                      |
| 1 | Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ                  | 438,3  | 16,6% | 927,3                         | 31,1% | 211,6%                                 |
| 2 | Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ               | 763,8  | 28,9% | 679,8                         | 22,8% | 89,0%                                  |
| 3 | Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ                 | 469,7  | 17,8% | 407,3                         | 13,7% | 86,7%                                  |
| 4 | Արգնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ                 | 164,7  | 6,2%  | 184,6                         | 6,2%  | 112,1%                                 |
| 5 | Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ               | 586,0  | 22,2% | 705,8                         | 23,7% | 120,4%                                 |
| 6 | Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ     | 216,6  | 8,2%  | 65,4                          | 2,2%  | 30,2%                                  |
| 7 | Այլ ներդրումներ                                    |  |       | 8,3                           | 0,3%  |  |
|   | <b>Ընդամենը</b>                                    | <b>2 639,3</b>   |       | <b>2 978,5</b>                |       | <b>112,9%</b>                          |

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

**Աղյուսակ 2 (մլն դրամ)**

|   | Ներդրումների ձևավորման աղբյուրները                           | Կապիտալացված և հետագա կապիտալացման ենթակա ծախսեր | Ընթացիկ ծախսեր | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|--|--|----------------|----------|
| 1 | 2  | 3  | 4              | 5        |
| 1 | Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից           | 442,5  | 0,0            | 442,5    |
| 2 | Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից | 476,6  | 0,0            | 476,6    |
| 3 | Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից                     | 17,0   | 0,0            | 17,0     |

|     |   |                |            |                |
|-----|---|----------------|------------|----------------|
| 4   | Սեփական ուժերով կատարված աշխատանքներից      | 2 209,7        | 8,3        | 2 218,0        |
| 4,1 | աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր | 9,9            | 0,0        | 9,9            |
| 4,2 | հումք և նյութեր                             | 31,8           | 0,0        | 31,8           |
| 4,3 | տեղակայման ենթակա սարքավորումներ            | 1 912,8        | 0,0        | 1 912,8        |
| 4,4 | այլ   | 255,1          | 8,3        | 263,5          |
| 5   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                             | <b>3 145,8</b> | <b>8,3</b> | <b>3 154,2</b> |

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2012 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 3 154,2 մլն դրամ գումար, որից մոտ 99,7%-ը հանդիսանում է կապիտալացված և հետագայում կապիտալացման ենթակա աշխատանքների արժեքը, իսկ 0,3%-ը ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխատանքների արժեքը: Ներդրումների 15,11%-ն իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի 70,32%-ը (այս ծավալում ընդգրկվել են նաև տեղակայման ենթակա սարքավորումների արժեքները, որը կազմում է ընդհանուր ներդրումների 60,6%-ը): Ներդրումների 14,03%-ը նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներն են և 0,54%-ի ներդրումներն ուղղվել են տեղակայում չպահանջող հիմնական միջոցների ձեռքբերմանը:

### **3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի հետագա սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**

Ընկերության կողմից ներկայացված հաշվետվության ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել որոշ խնդիրներ, մասնավորապես՝

- Համաձայն ընկերության կողմից ներկայացված սկզբնական փաստաթղթերի՝ «Սևան», «Հրազդան», «Արգել», «Արզնի» և «Քանաքեռ» ՀԷԿ-երում կատարված էլեկտրակայանների փոխարինման աշխատանքներն, ամբողջ ծավալով (219,3 մլն դրամ), իրականացրել է «Գրավո» ՍՊԸ-ն, որը հաղթող է ճանաչվել ընկերության կողմից վերոնշյալ ՀԷԿ-երի էլեկտրակայանների փոխարինման նպատակով կազմակերպված մրցույթում: Նշված մրցութային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը՝

1. 27.09.2011թ. մրցույթին ներկայացված ծրարների բացման թիվ 010 արձանագրության համաձայն «Գեղամա ԷՏՇ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանել մրցութային փաթեթի ձևերին, մասնավորապես՝ հայտում բացակայել է դատարանից տեղեկանքը, իսկ 03.10.2011թ. մրցութային հայտերի գնահատման և մրցույթի հաղթողի ընտրության վերաբերյալ թիվ 014 արձանագրության համաձայն՝ ընկերությունը համարվել է հաղթող՝ զբաղեցնելով երրորդ տեղը:
2. 27.09.2011թ. մրցույթին ներկայացված ծրարների բացման թիվ 010 արձանագրության համաձայն «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ըստ էության և բովանդակության համապատասխանել են մրցութային փաթեթի ձևերին, իսկ 03.10.2011թ. մրցութային հայտերի գնահատման և մրցույթի հաղթողի ընտրության վերաբերյալ թիվ 014 արձանագրության համաձայն՝ ընկերության հայտը մերժվել է՝ առանց նշելու գնահատման չափանիշների և ընթացակարգերի կոնկրետ հիմքը:

Հաշվի առնելով, որ վերը նշված մրցույթը կազմակերպվել է խախտումներով և հանգեցրել է ոչ արդյունավետ գնման իրականացմանը՝ դրա արդյունքում ձևավորված գինը չի կարող արժանահավատորեն արտացոլել կատարված աշխատանքների իրական արժեքը:

Նշված աշխատանքների իրականացման համար կատարված՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը որոշելու համար ուսումնասիրվել է նաև ընկերության կողմից ներկայացված՝ այդ աշխատանքների նախահաշվային արժեքը: Նախահաշվի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախատեսված աշխատանքների արժեքների վրա կիրառվել են մի շարք չհիմնավորված շինարարական գործակիցներ (110 մլն դրամ ընդհանուր ծավալով), որոնց նվազեցման արդյունքում նախատեսված աշխատանքների նախահաշվային արժեքը կազմել է 135,7 մլն դրամ, որը և ներառվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հաշվետվությամբ ներկայացված 219,3 մլն դրամ ծավալը 83,6 մլն դրամով, համամասնորեն, նվազեցվել է «Սևան», «Հրազդան», «Արգել», «Արգնի» և «Քանաքեռ» ՀԷԿ-երում նշված աշխատանքների կատարման համար ներկայացված ծավալներից:

- Բացի այդ, ներկայացված հաշվետվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ «Սևան», «Հրազդան», «Արգել», «Արզնի», «Քանաքեռ», «Երևան-1» և «Երևան-3» ՀԷԿ-երում 2012 թվականի ընթացքում կատարված ներդրումների համապատասխան կապիտալացվել է 255,1 մլն դրամի վարկի տոկոսներ (250,6<sup>2</sup> մլն դրամը ավարտված ներդրումների մասով): Նշված տոկոսները սակագնով փոխհատուցման ենթակա չեն, քանի որ, համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N413Ա որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի, ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումների արդյունքում շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը մինչև շահույթի և մաշվածության բազաներում ներառելը կինդեքսավորվի 2014 թվականի սակագնի հաշվարկման ժամանակ: Այսինքն, 2011 և 2012 թվականների ընթացքում իրականացված ներդրումների նպատակով ներգրավված ֆինանսական միջոցների սպասարկման ծախսերի սակագնով փոխհատուցման հարցը արդեն իսկ կարգավորված է վերը նշված որոշմամբ:

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2012 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

### **3.1. Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ**

2012 թվականի ներդրումային ծրագրով Սևան ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 438,3 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրակայանքների և ակումուլյատորային մարտկոցների փոխարինման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 927,3 մլն դրամի աշխատանքներ<sup>3</sup>, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

---

<sup>2</sup> Այս ծավալում 10,6 մլն դրամի վարկի տոկոսները կապիտալացվել են 2011 թվականին կատարված և 2012 թվականին ավարտված աշխատանքների համար:

<sup>3</sup> «Սևան», «Հրազդան», «Արգել», «Արզնի» և «Քանաքեռ» ՀԷԿ-երի էլեկտրակայանքների փոխարինման աշխատանքները կատարվել են ընկերության 2011-2012 թվականների միասնական ներդրումային ծրագրի շրջանակներում, որով նշված ուղղությամբ համաձայնեցված էր ընդհանուր 2724,8 մլն դրամ, իսկ փաստացի ներդրվել է ընդհանուր 2495,2 մլն դրամ, որի հիմնական մասը (2099,4 մլն դրամ)՝ 2012 թվականին: Ուստի, նշված ուղղություններով 2012 թվականի համար առանձին ուղղություններով փաստացի կատարված ներդրումների գերազանցումները չեն նվազեցվել:

Նշված ծավալում 1,3<sup>4</sup> մլն դրամի ներդրումները (ակումուլյատորային մարտկոցների փոխարինում) գերազանցել են ներդրումների նախապես համաձայնեցված ծավալը, ուստի ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված էլեկտրակայանքների փոխարինման աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 39,0 մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են իրականացված ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղությամբ 61,8 մլն դրամ և 6,8 մլն դրամ ծավալով ներկայացվել են համապատասխանաբար 2012 և 2011 թվականների համար կապիտալացված վարկի տոկոսներ, որոնք ևս ենթակա են նվազեցման:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված 927,3 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 818,3 մլն դրամը:

### **3.2. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ**

2012 թվականին Հրազդան ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 763,8 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրակայանքների և ակումուլյատորային մարտկոցների փոխարինման ու հիդրոտեխնիկական կառույցների վերականգնման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 740,0 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում 679,8 մլն դրամ ծավալով աշխատանքներ ավարտվել են: Մնացած 60,2 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ավարտված ներդրումների ծավալում 0,7 մլն դրամի ներդրումները գերազանցել են ներդրումների նախապես համաձայնեցված ծավալը, ուստի ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված էլեկտրակայանքների փոխարինման աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության

---

<sup>4</sup> Նախապես համաձայնեցված ներդրումների ծավալից փաստացի կատարված ներդրումների գերազանցումները հաշվարկելիս, ըստ ուղղությունների, հաշվի են առնվել նաև 8,3 մլն դրամի ֆինանսական ծախսերը:



արդյունքում 11,5 մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են իրականացված ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղությամբ 65,6 մլն և 3,7 մլն դրամ ծավալով ներկայացվել են համապատասխանաբար 2012 և 2011 թվականների համար կապիտալացված վարկի տոկոսներ, որոնք ևս ենթակա են նվազեցման:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված 679,8 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 598,3 մլն դրամը:

### **3.3. Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ**

2012 թվականին Արգել ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 469,7 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրակայանքների և ակումուլյատորային մարտկոցների փոխարինման, N1 հիդրոագրեգատի վերականգնման և NN 1-2 տուրբինային առանցքակալների վերազինման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 407,3 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Այս ուղղությամբ իրականացված էլեկտրակայանքների փոխարինման աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 5,2 մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են իրականացված ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղությամբ 31,4 մլն դրամ ծավալով ներկայացվել է 2012 թվականի համար կապիտալացված վարկի տոկոսներ, որոնք ևս ենթակա են նվազեցման:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված 407,3 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 370,7 մլն դրամը:

### **3.4. Արգնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ**

2012 թվականին Արգնի ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 164,7 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրակայանքների փոխարինման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 184,6<sup>3</sup> մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Այս ուղղությամբ իրականացված էլեկտրակայանների փոխարինման աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 5,8 մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են իրականացված ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղությամբ 12,6 մլն դրամ ծավալով ներկայացվել է 2012 թվականի համար կապիտալացված վարկի տոկոսներ, որոնք ևս ենթակա են նվազեցման:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված 184,6 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 166,2 մլն դրամը:

### **3.5. Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ**

2012 թվականին Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 586,0 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրակայանների փոխարինման և շինությունների կառուցման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 705,8<sup>3</sup> մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Այս ուղղությամբ իրականացված էլեկտրակայանների փոխարինման աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 22,2 մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են իրականացված ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղությամբ 64,0 մլն դրամ ծավալով ներկայացվել է 2012 թվականի համար կապիտալացված վարկի տոկոսներ, որոնք ևս ենթակա են նվազեցման:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված 705,8 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 619,6 մլն դրամը:

### **3.6. Երևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ**

2012 թվականին Երևան ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ ներդրումներ նախատեսված չէին:

Փաստացի կատարվել են 4,9 մլն դրամի աշխատանքներ, որոնք մնացել են անավարտ:

### **3.7. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ**

2012 թվականին ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր ներդրումներ կատարել հետևյալ ուղղություններով՝

- մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում,
- կայանների անվտանգության մակարդակի բարձրացում,
- ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում,
- տնտեսական ապրանքների ձեռքբերում,
- համակարգչային տեխնիկայի և արտեսուարների ձեռքբերում,
- գրասենյակային կահույքի ձեռքբերում,
- հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերում,
- բջջային հեռախոսների ձեռքբերում,
- հաշվապահական ծրագրի ձեռքբերում:

**Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 13,0 մլն դրամ 1 հատ միկրոավտոբուսի ձեռքբերման նպատակով: Փաստացի այս ուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել:

**Կայանների անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 165,8 մլն դրամ ՀԷԿ-երում անվտանգության համակարգերի ներդրման նպատակով: Փաստացի կատարվել է 159,0 մլն դրամի ներդրում, որի արդյունքում ավարտվել են 48,4 մլն դրամի աշխատանքներ: Մնացած 110,6 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ուղղությամբ 4,6 մլն դրամ ծավալով ներկայացվել է 2012 թվականի համար կապիտալացված վարկի տոկոսներ, որոնք ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

**ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 11,4 մլն դրամ ՀԷԿ-երում շարժիչների, պոմպերի և ներանցիչների ձեռքբերման և փոխարինման նպատակով: Փաստացի կատարվել է 7,7 մլն դրամի ներդրում, որն ամբողջ ծավալով ավարտվել է:

Այս ուղղությամբ ձեռք են բերվել 3 հատ 3 տոննա և 1 հատ 5 տոննա վերամբարձ ուժով ձեռքի ամբարձիչներ՝ համապատասխանաբար 0,4 մլն դրամ և 0,2 մլն դրամ, 1 հատ շարժական վերհան հարթակ՝ 2,4 մլն դրամ ծավալներով և իրականացվել է 0,2 մլն դրամ ծավալով 1 հատ պոմպի վերանորոգման աշխատանք, որոնք նախապես համաձայնեցված չեն եղել և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

**Տնտեսական ապրանքների ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 0,6 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 0,1 մլն դրամի տնտեսական ապրանքներ:

**Համակարգչային տեխնիկայի և արքեսուարների ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 12,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 4,9 մլն դրամի ապրանքներ:

**Գրասենյակային գույքի ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 1,5 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 1,0 մլն դրամի ապրանքներ:

**Հսկիչ-չափիչ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 4,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել 3,0 մլն դրամի սարքավորումներ:

**Բջջային հեռախոսների ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսված 0,3 մլն դրամի ներդրումներն իրականացվել են նույն ծավալով:

**Հաշվապահական ծրագրի ձեռքբերման ուղղությամբ** 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 8,0 մլն դրամ: Այս ուղղությամբ ընկերությունը ներդրումներ չի իրականացրել:

Արդյունքում, ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել են 7,8 մլն դրամի ներդրումներ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմել է 57,6 մլն դրամ:

### **3.8. Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ**

Իրականացված ներդրումների կազմում ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումները՝ 8,3 մլն դրամը, իրենցից ներկայացնում են «Սևան», «Հրազդան», «Արգել», «Արզնի» և «Քանաքեռ» ՀԷԿ-երում կատարված էլեկտրակայանքների և ակումուլյատորային մարտկոցների ձեռքբերման հետ կապված ֆինանսական ծախսեր, որոնք ենթակա են ներառման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ամփոփ ծավալը**

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

մլն դրամ

|     |   |         |
|-----|---|---------|
| 1   | 2012 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ  | 3 154,2 |
| 2   | 2012 թվականի ընթացքում իրականացված անավարտ աշխատանքների արժեքը  | 175,7   |
| 3   | 2012 թվականի ընթացքում իրականացված ավարտված ներդրումներ   | 2 978,5 |
| 4   | Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝   | 339,5   |
| 4.1 | <i>Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը (ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում)</i> | 3,2     |
| 4.2 | <i>Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ</i>  | 2,0     |
| 4.3 | <i>Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված ներդրումներ</i>  | 83,6    |
| 4.4 | <i>Վարկի տոկոսներ</i>   | 250,6   |
| 5   | 2012 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը                                 | 2 639,0 |